ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 864-Ա « 11 » մարտի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի Հ.1870-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով.

1.Երևանի քաղաքապետի 2023 թվականի հունիսի 30-ի «Երևանի քաղաքապետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2019 թվականի ապրիլի 16-ի հ.1216-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.1870-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետից հանել «՝ անձանց գրավոր պահանջի հիման վրա» բառերը.

2) Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ՝ նոր խմբագրությամբ.

«3) ընդունելություն կազմակերպելու վերաբերյալ դիմումատուի պահանջը ձևակերպվում է գրավոր՝ Երևանի քաղաքապետարան դիմում ներկայացնելու միջոցով, ընդունելության պահանջը կարող է ձևակերպվել նաև բանավոր կերպով՝ քաղաքացիների սպասարկման 1-05 հեռախոսահամարին զանգահարելու, քաղաքացիների սպասարկման սրահ ներկայանալու և բանավոր կերպով նման պահանջ ներկայացնելու միջոցով, վերջին երկու դեպքերում քաղաքացու պահանջը գրանցվում և ընթացք է ստանում գրավոր պահանջի դեպքում կիրառվող ընթացակարգով: Քաղաքացու ընդունելության գրավոր կամ բանավոր պահանջը պարտադիր պետք է նշում պարունակի ընդունելության կազմակերպման արդյունքում պարզաբանման ենթակա հնարավոր հարցերի վերաբերյալ.»:

2.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ